

տուվ եւ ախամբք մեծագնով. եւ ունէր յաջ  
 ձեռն սուր երկասյրի մերկ. եւ ի ձախն կշիւք. <sup>125</sup>  
 եւ էր գրեալ թէ թագն թագաւորութիւնս  
 նշանակէ եւ կոյսն՝ զկուսութիւն քաղաքիս  
 նշանակէ, որ ի սկզբանէ մինչեւ ցայսօր ոչ  
 անկաւ ընդ ձեռամբք ումեք եւ ոչ տիրեաց ոք  
 ամա եւ ոչ ծառայեաց այլում եւ ոչ ոք ի <sup>130</sup>  
 թշնամեաց տիրեաց կամ գերեաց. այլ մնաց  
 անյաղթ եւ անխախտ որպէս զկոյս աղջիկ:  
 Իսկ կշիւն զարդարութիւն նշանակէ, որպէս  
 եւ ի գիրս ամենայն ուրեք զարդար դատաս-  
 տանն ցուցանէ: Իսկ սուրն մերկ զբարկու- <sup>135</sup>  
 թիւնն Աստուծոյ ըստ Պօղոսի. Զի թէ զրկէք  
 զմիմիանս եւ անիրաւիք եւ չլինիք որպէս  
 զմէտս կշոոց, նա սուրս այս մաշեացէ զձեզ:  
 Վասն որոյ տեսեալ զահագին սուրս պատ-  
 րաստ կացիք: <sup>140</sup>

Եւ կայր հանդէպ սարային տառապխանա  
 մի ամուր որպէս բերթ, զարմանաչէն, որ չկայ  
 յարարածս նման նմա: Եւ դռան երկու կողմն  
 դբսէ շինած էր երկու մեծ եւ անճոռնի ծո-  
 վային մարդիք ի մարմարէ, մերկ եւ խայտա- <sup>145</sup>  
 ռակ. եւ ունէր մինն ի ձեռն հաստ բիր մի եւ  
 միւսն մեծ քար. եւ թէ ոք կամէր ի ներսն  
 մտանել՝ կարծէր թէ կամին հարկանել: Եւ  
 տառապխանին վերեւն զուղած էր մարմարէ  
 զչինոզ վարդապետն ու զիւր բանվորնին. եւ <sup>150</sup>  
 ամէնին ձեռն հանգանակ բան մի, զոր ոչ կա-  
 րեմ գրել մի ըստ միովէ: